II

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ (1920–1930 թթ.)

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՍԽՀ վարչատարածքային փոփոխությունների պատմությունն ավելի լավ ու խորը հասկանալու համար հարկ ենք համարում համառոտակի անդրադառնալ խորհրդայնացման նախօրյակին Հայաստանի վարչական կառուցվածքի պատմությանը:

Հայտնի է, որ 1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը: Սրա հիման վրա Արևելյան Հայաստանի մեծ մասի վրա ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը: Որպես անկախ պետություն՝ անհրաժեշտություն առաջացավ Հայաստանի Հանրապետությունում մտցնել նոր վարչական կառուցվածքներ, հստակեցնել վերջիններիս վարչատարածքային սահմանները և, ըստ այդմ էլ, կազմավորել տեղական իշխանությունների մարմիններ:

Նոր վարչատարածքային փոփոխություններ կատարելու ուղղությամբ լուրջ քայլեր արվեցին միայն 1919 թ., երբ հանրապետության ներքաղաքական կացությունը կայունացման միտումներ դրսևորեց: Նույն թվականի փետրվարին հանրապետության Ներքին գործերի նախարարությունը ստեղծեց հանձնաժողով՝ Հայաստանը նոր վարչատարածքային գավառների բաժանելու համար: Հանձնաժողովականները, համակողմանիորեն ուսումնասիրելով ու քննարկելով խնդրին վերաբերող բոլոր նյութերը և տեղերից բնակչության կողմից արված առաջարկությունները, իհարկե, ուշադրության կենտրոնում ունենալով հանրապետության տնտեսական ու քաղաքական շահերը, հանգեցին միակամ եզրակացության՝ վարչատարածքային բաժանում անցկացնել ոչ միայն այն տեղերում, որոնց վրա անվիճելիորեն տարածվում էր հանրապետության իշխանությունը, այլև վիճելի համարվող այն տարածքներում (խոսքը հիմնականում Նախիջևանի գավառի մասին է), որոնք տվյալ պահին գտնվում էին Մեծ Բրիտանիայի ժամանակավոր կառավարման ներքո[1]: 1919 թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած նիստում հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանել 10 վարչական գավառների՝ Նախիջևանի, Շարուրի, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրա-

[1] *Տե՛ս Հ. Հարությունյան. Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ., Երևան, 2012, էջ 30:*

պոլի (այժմ՝ Գյումրի), Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր), Դիլիջանի, Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ), Սուրմալուի և Դարալագյազի (այժմ՝ Եղեգնաձոր)[2]:

Հանրապետության տարածքի ընդլայման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կազմավորվում են Կարսի և Զանգեզուրի շրջանները: Վարչական նոր բաժանման հետևանքով Նոր Բայազետի գավառի [բաղկացած էր Նոր Բայազետի, Ելենովկայի (այժմ՝ Սևան), Բասարգեչարի (այժմ՝ Վարդենիս), Ղարանլուղի (այժմ՝ Մարտունի) գավառամասերից] կազմից դուրս մնացին և նորաստեղծ Դիլիջանի գավառին[3] միացվեցին Ջիլի գյուղական հասարակության (Սևանա լճի արևելյան կողմում) 4 գյուղերը՝ Արդանիշ, Աղբուլաղ, Թոխլուջա (այժմ՝ Դրախտիկ), Նադեժդինո (այժմ՝ Ջիլ), և նույն գավառի ևս 2 գյուղերը՝ Չիբուխլուն (այժմ՝ Ծովագյուղ) և Սեմյոնովկան[4]:

Նոր Բայազետի գավառից մի ստվար հատված էլ՝ Քյանքյանի գյուղական հասարակությունը (Ներքին Ախտայի հատվածից), մտցվեց Երևանի գավառի կազմի մեջ[5]:

Հանրապետության կառավարությունը երկրի վարչական փոփոխությունների խնդրին անդրադարձավ 1920 թ. գարնանը:

Մի վերջին անգամ Հայաստանի տարածքը վարչական փոփոխության ենթարկվեց ՀՀ կառավարության 1920 թ. մայիսի 2-ին ընդունած օրենքի հիման վրա, ըստ որի՝ այն բաժանվեց 4 նահանգների՝ Արարատյան կամ Երևանի, Շիրակի կամ Ալեքսանդրապոլի, Կարսի կամ Վանանդի և Սյունիքի կամ Զանգեզուրի[6]: Ըստ այդմ՝ Նոր Բայազետի գավառը մտցվեց Երևանի նահանգի կազմի մեջ[7]:

Հանրապետության վարչատարածքային կառուցվածքի այս վիճակն անփոփոխ մնաց մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելը:

Պարբերաբար կրկնվող վարչատարածքային փոփոխությունները մտածելու տեղիք են տալիս. ո՞րն էր երկրի և պետության շահը: Մեր կարծիքով՝ Հայաստանը ներքաղաքական առումով մեկ հիմնական շահ ուներ՝ իշխանության կենտրոնացման ճանապարհով կայունացնել երկրի ներքին վիճակը, ասել է՝ զսպաշապիկ հագցնել մահմեդական բնակչության անջատողական ձգտումներին, քանի որ Հայաստանի մի շարք շրջաններում [Նախիջևանում, Զանգիբասարում (այժմ՝ Մասիս), Բասարգեչարում և այլուր] հաճախակի էին դարձել մուսուլման բնակչության խռովությունները:

---

[2] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 203, ց. 1, գ. 57, թթ. 16–17: 1919 թ. ՀՀ վարչատարածքային կառուցվածքին վերաբերող մեզ հայտնի փաստաթղթերում, հասկանալի պատճառով, 10 գավառի փոխարեն նշված են 8-ը, չկան Նախիջևանի և Շարուրի գավառները (տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 4, գ. 13, թթ. 10, 12–13):*

[3] *1919 թ. սեպտեմբերի 16-ին պառլամենտի կողմից ընդունվեց օրենք՝ Դիլիջան քաղաքը Դիլիջանի գավառի և գավառական ինքնավարության կենտրոն ճանաչելու մասին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 57, թ. 49):*

[4] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 57, թ. 49, Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 31:*

[5] *Քյանքյանն ուներ 4 գյուղական հասարակություն, 14 գյուղ՝ 13225 բնակչությամբ, որից 7600-ը բնիկներ, իսկ 5625-ը՝ գաղթականներ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 4, գ. 4, թ. 9):*

[6] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 119, թ. 137:*

[7] *Տե՛ս նույն տեղում:*

Հայաստանի խորհրդայնացումից հետո հանրապետության տարածքը մի շարք անգամներ ենթարկվեց ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնակի վարչատարածքային բաժանումների, որոնց հիմքում ընկած էին թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական դրդապատճառներ:

Ակնհայտ է, որ տնտեսության արդյունավետ զարգացումն ընթանում է տվյալ երկրի նաև ներքին շրջանների միջև տնտեսական, կոմունիկացիոն և այլ կապերը շարունակաբար խորացնելու և ամրապնդելու նշանաբանով: Հետևաբար, ամեն մի վարչական փոփոխություն ինքնանպատակ գործընթաց չէ, այլ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական պահանջների հենքի վրա ձևավորված պետական քաղաքականություն: Տնտեսական առումով՝ Հայաստանի բնակլիմայական առանձնահատուկ պայմանները, տնտեսական գործունեության ձևերի բազմազանությունը, աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխվածությունը, ներքին շրջանների տնտեսական կապերի առկա անհարմարությունները (ծայրամասային բնակավայրերի կտրվածությունը կենտրոնական շրջաններից, բարեկարգ ճանապարհների ու ռադիո-հեռախոսակապի բացակայությունը և այլն) խթան հանդիսացան նոր վարչական բաժանումների համար:

Մյուս կողմից՝ վարչատարածքային բաժանումները օգնում էին լուծել կամ հնարավորինս մեղմել հողասակավության խնդիրը, գյուղերի և գավառների միջսահմանային վեճերը:

Հավելենք, որ վարչատարածքային միավորների փոփոխությունները պայմանավորված էին նաև հին վարչական հիմնարկությունների ու պաշտոնների վերացումով և նորերի ստեղծումով, տվյալ դեպքում տեղերում հեղկոմների իշխանությունը ամրապնդելու[8], մինչև խորհրդային մարմինների կազմակերպումը երկիրը կառավարելու անհրաժեշտությամբ: Այդ կապակցությամբ պատմաբան Վ. Ղազախեցյանն իրավացիորեն նկատել է. «Հեղկոմների կազմավորման սկզբունքների մասին դեկրետի հետ միաժամանակ պարզություն մտցվեց նաև հանրապետության վարչատարածքային կառուցվածքի հարցում, որն անհրաժեշտ էր առաջիկա ընտրությունների կապակցությամբ»[9]:

Հայաստանի նոր վարչական փոփոխությունների հարցը կենտրոնական տեղ գրավեց ՀՍԽՀ կառավարության 1921 թ. հուլիսի 20-ի նիստում: Կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ այդ փոփոխությունների նախագիծը քննարկվեց և որոշ ուղղումներով ընդունվեց: Ըստ այդմ՝ Խորհրդային Հայաստանի տարածքը վարչական տեսակետից բաժանվում էր 33 գավառամասի և 8 գավառի՝

---

[8] *Հեղկոմները ժամանակավոր ստորադասական կարգով նշանակվի իշխանության մարմիններ էին (տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, Էջմիածին, 1921, էջ 76–82):*

[9] *Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, էջ 228:*

Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու (կենտրոնը Ջալալօղլի, այժմ՝ Ստեփանավան), Իջևանի, Նոր Բայազետի և Դարալագյազի:

Երևան քաղաքը չէր մտնում նույնանուն գավառի կազմում և հանդիսանում էր առանձին վարչական միավոր: Ալեքսանդրապոլ ու Նոր Բայազետ քաղաքները, մտնելով նույն գավառների մեջ, վարչական տեսակետից կազմում էին իրենց գավառամասերին համապատասխան միավորներ[10]:

Վարչատարածքային փոփոխությունների, այսպես կոչված, շքերթը շարունակվեց մեկ ամիս անց՝ 1921 թ. օգոստոսին՝ կապված Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի կազմի մեջ մտցնելու հետ: Ի լրումն Ժողկոմխորհի, նույն տարվա հուլիսի 20-ի Հայաստանի վարչական բաժանման դեկրետի՝ վերջինս օգոստոսի 31-ին որոշեց Զանգեզուրի՝ ՀՍԽՀ-ն կցված մասից կազմել առանձին Զանգեզուրի գավառ (Գորիս կենտրոնով)[11]: ՀՍԽՀ-ն վարչատարածքային առումով ունեցավ 9 գավառ և 39 գավառամաս[12]:

1922 թ. ՀՍԽՀ-ում կատարվեց մասնակի վարչական փոփոխություն. Իջևանի գավառը վերակազմավորվեց որպես Դիլիջանի գավառ, և ստեղծվեց նոր՝ Մեղրիի գավառը: Փաստորեն, 1922 թ. դրությամբ Խորհրդային Հայաստանը վարչականորեն բաժանված էր 10 գավառի և 41 գավառամասի (շրջանի): Գավառներն էին՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Լոռիի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Ղարաքիլիսայի, Էջմիածնի, Դարալագյազի, Զանգեզուրի, Մեղրիի[13]:

Նոր Բայազետի գավառը տարածված էր Սևանա լճի արևելյան, հարավ-արևելյան, հարավային, արևմտյան և մասամբ նաև հյուսիս-արևելյան կողմերում, որը հիմնականում համընկնում է ներկայիս Գեղարքունիքի մարզի Վարդենիսի, Մարտունու, Գավառի և Սևանի ենթաշրջանների զբաղեցրած տարածքներին: Արևելքում նրա սահմանն անցնում էր ավազանը Դիլիջանի գավառից բաժանող Սևանա լեռնաշղթայով, ապա արևելքից սահմանակցվում էր Արցախին, հարավից՝ Սյունիքի Վայոց Ձորին, իսկ արևմուտքում հասնում էր մինչև Ախտայի գավառամասի սահմանները:

Պաշտոնական վիճակագրության տվյալներով Նոր Բայազետի գավառի ընդհանուր տարածքը, մինչև 1929 թ. վարչական բաժանումը (ներառյալ Սևանա լիճը՝ 1231,68

---

[10] Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, էջ 83–84:

[11] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 22. VII. 1921:

[12] Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, էջ 39–40:

[13] Տե՛ս Յուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի, Երևան, 1923, էջ 4–83, «Խորհրդային Հայաստան», 8. IV. 1922:

քառ. կմ)[14], 3246,6 քառ. կմ էր[15] կամ 231761 դեսյատին[16], կամ 5375,0 քառ. վերստ[17], որը կազմում էր ՀՍԽՀ ամբողջ տարածքի (29063,6 քառ. կմ)[18] 11,17 %-ը:

1928–1929 թթ. ԽՍՀՄ-ում ավարտվեց ժողովրդական տնտեսության վերականգնումը: Այնուհետև, ինչպես նշված է ՀամԿ (բ)Կ 16-րդ կոնֆերանսի (1929 թ.) որոշումներում, առաջին հնգամյակի ընթացքում երկրի սոցիալիստական շինարարության մեջ կատարվելու էր կտրուկ առաջընթաց, աննախադեպ զարգանալու էր հանրապետությունների ու մարզերի տնտեսական և մշակութային կյանքը[19]:

Վիթխարի խնդիրները հաջողությամբ լուծելու համար ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում առաջնային էր համարվում արտադրողական ուժերի հետագա հիմնավորված ու կշռադատված տեղաբաշխումը, արդյունաբերությունը հնարավորինս հումքի աղբյուրներին մոտեցնելը, բնակլիմայական պայմաններին համապատասխան շրջանների արտադրական մասնագիտացումը և այլն: Ուստի նախատեսվում էր երկիրը ենթարկել նոր վարչական փոփոխությունների: Ըստ այդմ՝ հնգամյա պլանի խնդիրներին համապատասխան, ի թիվս ԽՍՀՄ մյուս հանրապետությունների, Հայաստանը ևս ենթարկվելու էր նոր վարչատարածքային փոփոխությունների: Նոր նախագծով առաջարկվում էր տնտեսական ու վարչական բաժանման շրջանային համակարգը, որի հիմքում դրված էր արտադրական սկզբունքը[20]: «Ամբողջ երկիրը,– ասված է հիշյալ նախագծում,– բաժանված է այնպիսի շրջանների, որոնք արտադրական տեսակետից, առավելագույն ամբողջություն, մի միասնություն են կազմում իրենցից և իրենց արտադրական տեսքով տարբերվում են մյուս շրջաններից… Նկատի են առնված ոչ միայն տվյալ շրջանի տնտեսության այժմյան վիճակը, այլև խոշոր չափով նրա տնտեսության զարգացման հեռանկարը»[21]:

Հանրապետության իշխանությունները միակամ իրենց համաձայնությունը հայտնեցին վարչատարածքային փոփոխությունների այն սկզբունքներին, որոնք ձևակերպված էին ՀամԿ (բ)Կ 16-րդ կոնֆերանսի բանաձևերում:

1929 թ. հուլիսին ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների 6-րդ համագումարը Հայաստանի սահմաններում վարչատնտեսական նոր շրջանացում կատարելու մասին որոշում ընդունեց[22]: Մինչ այդ ՀՍԽՀ պետպլանը ստեղծել էր հանձնաժողով՝ Մ. Սահակյանի գլխավորությամբ, որը պետք է մշակեր

---

[14] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 8, գ. 13, թ. 51:*

[15] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 586, ց. 1, գ. 38, թ. 5:*

[16] *Տե՛ս ՀԱԱ, գ. 62, թթ. 1–19: Մեկ դեսյատինը հավասար է 240 մ² սաժենի կամ 1.0925 մ²:*

[17] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, ց. 5, գ. 16, թ. 38: Մեկ վերստը հավասար է 500 սաժենի (108 մ): Մեկ սաժենը հավասար է երեք արշինի (2,16մ): Մեկ արշինը հավասար է 16 վերշոկի (72 սմ), իսկ մեկ վերշոկը՝ 4,5 սմ-ի (տե՛ս Հ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 8):*

[18] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, ց. 5, գ. 323, թ. 7:*

[19] *Տե՛ս ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, Երևան, 1955, էջ 778:*

[20] *Տե՛ս նույն տեղում, էջ 778, «Խորհրդային Հայաստան», 19. VIII. 1928:*

[21] *Տե՛ս «Ավանգարդ», 17. IX. 1929:*

[22] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1929:*

Հայաստանի տնտեսական-վարչական շրջանացման նախագիծը: Այդ աշխատանքը շուտով ավարտվեց: Նախագծով Հայաստանը բաժանվելու էր 5 շրջանի (օկրուգ)՝ Երևանի, Լենինականի, Լոռի-Փամբակի, Նոր Բայազետի և Զանգեզուրի[23]:

Նոր Բայազետի գավառի դեպքում նախագծում առանձին պարզաբանվում է, որ «արտադրական տեսակետից գավառը ճանապարհների բացակայության պատճառով լինելու է ամենահետամնացը, սակայն ունենալու է անասնաբուծության զարգացման մեծ հեռանկարներ»: Այնուհետև նշվում է, որ «Շրջանում են գտնվում Անդրկովկասի լավագույն արոտատեղիները, շրջանն ընդգրկում է Սևանա լճի ամբողջ ավազանը և լճի նավագնացությամբ նրա մասերը կապվում են իրար հետ, որպես մի ամբողջություն: Բացի դրանից, շրջանի համար խոշոր նշանակություն ունի լճային տնտեսությունը»[24]:

Նոր շրջանացման նախագիծը քննարկվեց 1929 թ. հուլիսին Երևանում կայացած հանրապետական խորհրդակցությունում: Խորհրդակցությունը Մ. Սահակյանի հանձնաժողովին հանձնարարեց նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները. ա) 35 շրջանի փոխարեն նախատեսել 31-ը, բ) նպատակահարմար համարել վերացնել նախագծով նախատեսվող հետևյալ շրջանները.

Բաշգառնու շրջանը բաժանվում է Կոտայքի, Բեյուք-Վեդու և Հրազդանի շրջանների միջև,

Դսեղի շրջանը բաժանվում է Ալլահվերդու, Ղարաքիլիսայի և Ստեփանավանի շրջանների միջև,

Դիլիջանի շրջանը ձուլվելու է Իջևանի շրջանի հետ, իսկ Քեշիշքենդի և Փաշալվի շրջանները կազմելու են մեկ շրջան:

Խորհրդակցությունը որոշել է Աղբաբայի շրջանը չմիացնել Ղրզբլ-Ղոչի շրջանին, ինչպես այդ որոշված էր նախագծով, այլ ստեղծել առանձին շրջան[25]:

1929 թ. հուլիսի 26-ին ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունը, քննարկելով Հայաստանի բանվորների, գյուղացիների ու կարմիր բանակայինների խորհուրդների 6-րդ համագումարի՝ ՀՍԽՀ սահմաններում նոր շրջանացում կատարելու մասին որոշումը, համապատասխան հանձնաժողովի ստեղծած նախագիծը և հանրապետական խորհրդակցությունում դրա քննարկման արդյունքները, որոշում է.

1. ՀՍԽՀ-ում գոյություն ունեցող վարչական բաժանումները վերացնել:

2. «գավառ» վարչական տերմինը թողնել անփոփոխ՝ գործածելով այն ռուսական «օկրուգ» բառի իմաստով, «գավառակ» վարչական տերմինը վերացնել՝ փոխարինելով այն «շրջան» (ռայոն) տերմինով,

---

[23] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19. VIII. 1928:*

[24] *Նույն տեղում:*

[25] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 17. VII. 1929:*

3. այժմյան Նոր Բայազետի գավառը վերանվանել Սևանի գավառ, Լոռու-Փամբակի և Դիլիջանի գավառները վերանվանել Լոռու գավառ: Մնացած գավառների անունները թողնել անփոփոխ,

4. ՀՍԽՀ ամբողջ տարածքը բաժանել հինգ գավառների՝ բաղկացած 31 շրջաններից: Ըստ այդմ՝ Երևանի գավառն իր կազմում ուներ 10, Լենինականինը՝ 7, Լոռի-Փամբակինը՝ 5, Սևանինը՝ 6 և Զանգեզուրինը՝3 շրջան, ընդհանուր թվով՝ 31[26]:

Վարչատարածքային այս բաժանումից նկատելի է, որ հանրապետության տարածքը բաժանված էր այնպիսի շրջանների, որոնք արտադրական տեսակետից առավելագույն ամբողջություն, մի միասնություն էին կազմում: Հատկանշական է, որ շրջանները բաժանելիս նկատի էր առնված ոչ միայն տվյալ շրջանի այժմյան վիճակը, այլև խոշոր հաշվով նրա տնտեսության զարգացման հեռանկարները[27]:

1929 թ. հուլիսի 30-ին ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունը նկատելի փոփոխություններով հաստատեց Հայաստանի շրջանացման նոր ծրագիրը[28]:

Ինչպես տեսանք, հիշյալ նախագիծը շոշափում էր նաև Նոր Բայազետի գավառի վարչական կենտրոնի հարցը, ըստ որի «Նոր Բայազետ քաղաքը շնորհիվ իր կտրվածության (գավառամասերից, գավառներից և հանրապետության կենտրոնից – Հ. Հ.) և չշարժության չի կարող գավառի կենտրոնը համարվել: Այդ տեսակետից հատկապես Երևան-Աղստաֆա գիծը (հասկանալ՝ երկաթգիծը – Հ. Հ.) կառուցելուց հետո Ելենովկան[29] ամեն հարմարություններն ունի և մի շարք տեխնիկական խնդիրների լուծումից հետո նա կդառնա գավառի կենտրոն»[30]:

Սևանի գավառը կազմվեց նախկին Նոր Բայազետի գավառից, Դիլիջանի գավառի Կարմիր գյուղի գավառակից, Երևանի գավառի Աշտարակի ու Ապարանի գավառակների մի մասից և Դարալագյազի գավառի մի մասից (Ալլագիլլյարի արոտավայրերից)[31]:

Ինչպես արդեն ասվել է, Սևանի գավառն ուներ 6 շրջան՝ Ալափարսի (կենտրոնը՝ Ալափարս), Ախտայի կամ Ռնդամալի (կենտրոնը՝ Ներքին Ախտա), Նոր Բայազետի (կենտրոնը՝ Նոր Բայազետ), Մարտունու (կենտրոնը՝ Մարտունի), Բասարգեչարի (կենտրոնը՝ Բասարգեչար) և Կարմիր գյուղի (կենտրոնը՝ Կարմիր)[32]:

---

[26] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1929:

[27] Տե՛ս «Ավանգարդ», 17. IX. 1929:

[28] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 31. VII. 1929:

[29] Հանրապետության բնակավայրերի անվանափոխման հանձնաժողովի 1935 թ. մարտի 1-ի շրջաբերականով Ելենովկան անվանակոչվեց Սևան (տե՛ս Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը, Երևան, 1971, էջ 115):

[30] 1930 թ. ապրիլի 23-ին կառավարությունը որոշում է. գավկենտրոնը Ելենովկա տեղափոխելու համար այստեղ կառուցել հետևյալ շենքերը, այն է՝ գավգործկոմի շենք – 100 հազ. ռ. սահմաններում, բնակելի շենքեր երկու հատ – 100 հազ. ռ. սահմաններում, բաղնիք – 75 հազ. ռ. սահմաններում, հյուրանոց– 100 հազ. ռ. սահմաններում, ընդամենը 375 հազ. ռ. չափով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 586, ց. 1, գ. 186, թ. 2):

[31] Տե՛ս «Ավանգարդ», 17. IX. 1929, □Խորհրդային Հայաստան□, 6. VIII. 1929:

[32] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 56, թթ. 47–60, «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1929, □Ավանգարդ□, 17. IX. 1929:

Արխիվային վավերագրերը հավաստում են, որ Սևանի գավառի մեջ մտնող Ալափարսի շրջանը ստեղծվել է Կոտայքի գավառակի Քյանքյան, Ղզղալա, Դավախարաբա (լքված), Դալլաքլու (լքված), Ղույլի (լքված), Նուռնուզ, Նոր Նիկոլանկա, Աշտարակի գավառակի Ղարաջորան (այժմ՝ Արա գյուղ), Թուլինաբի (այժմ՝ Սարալանջ), Քյալաշամբ (այժմ՝ Քարաշամբ), Թղիթ (այժմ՝ Թեղենիք), Արքել (այժմ՝ Լուսակերտ) և Ապարանի գավառակի Բուժական, Քիրաջլու, Ղալա, Ախտայի գավառակի Ներքին և Վերին Քաղսիներ, Թեզխարաբա (լքված), Արզաքենդ, Աղվերան, Բժնի, Գյումուշ (այժմ՝ Կարենիս), Ուզանլար (լքված), Սուխոյ-ֆոնտան (այժմ՝ Ֆանտան) և Սոլակ գյուղերից:

Ախտայի շրջանն իր մեջ ներառում էր Ելենովկայի և Ախտայի կամ Ռնդամալի գավառակները (բացառությամբ Ախտայի գավառակի վերոգրյալ այն գյուղերի, որոնք անցել են Ալափարսի շրջանին և Դիլիջանի գավառակի Չիբուխլու (այժմ՝ Ծովագյուղ) ու Սեմյոնովկա գյուղերի[33]:

Նոր Բայազետի շրջանը ստեղծվել է համանուն գավառակի տարածքի վրա, իր ունեցած սահմաններով անփոփոխ: Այս շրջանի օրինակով կազմավորվել է և Մարտունու շրջանը: Բասարգեչարի շրջանը՝ համանուն գավառակից՝ իր նախկին սահմաններով [բացառությամբ՝ Ջիլ և Բաբաջան (այժմ՝ Ծափաթաղ) գյուղերի, որոնք անցան Կարմիր գյուղի շրջանին][34]:

Կարմիր գյուղի շրջանը կազմավորվել է համանուն գավառակից, Բասարգեչարի գավառակի Ջիլ և Բաբաջան գյուղերից [բացի Կարմիր գյուղի գավառակի Գյոլքյանդ (այժմ՝ Այգուտ), Չայքյանդ (այժմ՝ Դպրաբակ), Ղարաղալա, Յանդ-Փայա (լքված) և Ամիրխեր (լքված) գյուղերից, որոնք մտցվեցին Իջևանի շրջանի կազմի մեջ][35]:

Անդրադառնալով 1929 թ. հուլիսի 26-ի վարչական փոփոխություններին՝ որպես հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներից բխող անհրաժեշտության՝ «Ավանգարդ» թերթը նշում է. «Խորհրդային իշխանությունը, ոչ մի դեպքում և ոչ մի պայմանով, չէր կարող բավարարվել եղած վարչական բաժանումով, որի շնորհիվ ասենք, օրինակ, Ապարանի հացահատիկային գավառակը մեխանիկորեն միացվում էր Երևանի այգեգործական-տեխնիկական բույսերի կուլտուրայի շրջանի հետ, կամ Ղարաքիլիսայի հետ քիչ առնչություն ունեցող Համամլուի (այժմ՝ Սպիտակ) գավառակը, մեխանիկաբար ամրացվում է Լոռի-Փամբակին և այլն» ու եզրակացնում. «Պարզ է, որ նման վարչական բաժանումով պլանային տնտեսություն չի կարելի վարել և անհրաժեշտ էր կործանել վարչական գավառային բաժանման այդ հին շրջանները, կառուցել նոր շրջաններ, որոնք համապատասխանեին նրա պահանջներին»[36]:

---

[33] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 56, թթ. 47–49, «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1929:*

[34] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 56, թթ. 34–38, 47–49, «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1929, □Ավանգարդ□, 17. IX. 1929:*

[35] *Տե՛ս նույն տեղում:*

[36] *Տե՛ս «Ավանգարդ», 17. IX. 1929:*

Վարչական բարեփոխումները հավատ էին ներշնչում, որ ընդմիշտ կվերանան անհարմարություններն իշխանության տեղական մարմինների ամրապնդման, կառավարումը տեղերին ավելի մոտեցնելու, հանրապետական կենտրոնի և շրջանների, ինչպես նաև վերջիններիս միջև համակողմանի կապերի հաստատման հետ: Սակայն ընդամենը մեկ տարի պահանջվեց, որ կյանքը հաստատեր, որ վարչական փոփոխությունների տվյալ ուղին լավագույնը չէր, և պետք էր որոնել վարչատարածքային փոփոխության այլ ուղիներ:

Այդպիսին դառնալու էր նոր տնտեսական-վարչական բաժանումը: 1930 թ. հուլիսի 15-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց գավառների վերացման, գավառները նոր շրջանացման ենթարկելու և նոր տնտեսական-վարչական բաժանում սահմանելու մասին՝ վարչատարածքային միավորների երկաստիճան համակարգով՝ գյուղական խորհուրդ և շրջան[37]: Որոշումը[38] հաստատվեց ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարի կողմից (1930 թ.): «Համագումարը ամբողջովին և լիովին հավանություն է տալիս Կենտկոմի այն որոշմանը, որով վերացվում է գավառը և ամրացվելու է շրջանը, որպես գյուղի սոցիալիստական շինարարության հիմնական օղակը, որը պետք է վճռաբար մոտեցնի կուսակցական, խորհրդային ապարատը գյուղին, կոլտնտեսություններին և մասսաներին»[39], _ ասված է ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարի ընդունած բանաձևում: Համագումարը հանձնարարում է Կենտկոմին կիրառել գործնական այն միջոցները, որոնք կապված են գավառների վերացման և շրջանների ու մարզերի ամրապնդման հետ:

Կուսակցությունը շրջանացման նոր քաղաքականությամբ խնդիր ուներ կառավարումն ավելի մոտեցնել տեղերին, մյուս կողմից էլ՝ իշխանության տեղական մարմինները ամրապնդել[40]: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վերոնշյալ որոշման մեջ հենց այդպես էլ ասված է. «Գավառների վերացման ամբողջ աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է եղնել կուսակցական, խորհրդային, տնտեսական, կոոպերատիվ և արհմիութենական ապարատները մաքսիմալ չափով շրջանին և գյուղին մոտեցնելու հիմնական խնդրից»[41]:

Բանն այն է, որ պլանային և օպերատիվ ֆունկցիաների կենտրոնացումը գավառում ստեղծել էր այնպիսի դրություն, որ շրջանային մարմինները կարող էին գործել և անմիջականորեն միայն իրենց շրջանին վերաբերող հարցեր լուծել գավառական մարմինների ցուցումներով: Դրա պատճառով չէր կարող բավականաչափ զարգանալ

---

[37] *Երկրի կառավարումը մինչ այդ հենվում էր ԽՍՀՄ վարչատնտեսական եռաստիճան բաժանման սկզբունքի վրա, այն է՝ գյուղ, շրջան, գավառ (օկրուգ) (տե՛ս Վ. Ղ ա զ ա խ ե գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 383):*

[38] *Տե՛ս ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 3-րդ մաս, Երևան, 1955, էջ 23–24, □Խորհրդային Հայաստան□, 17. VII. 1930:*

[39] *Տե՛ս ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 3-րդ մաս, էջ 23–24, «Ավանգարդ», 11. VII. 1930:*

[40] *Տե՛ս Վ. Ղ ա զ ա խ ե գ յ ա ն. նշվ. աշխ.,, էջ 383:*

[41] *Տե՛ս ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 3-րդ մաս, էջ 23–24, «Ավանգարդ», 11. VII. 1930, 17. VII. 1930:*

շրջանային մարմինների ու դրանց հետ անմիջականորեն կապված գյուղխորհուրդների նախաձեռնողականությունը: Եթե այդ բոլորին ավելացնենք այն, որ շրջաններն ապահովված չէին բանիմաց ու որակյալ աշխատողներով, և լավագույն կադրերը կենտրոնացած էին գավառում, ապա պարզ կդառնա շրջանի թուլությունը և նրա անպատրաստ վիճակը՝ հաջող կերպով լուծելու գյուղի սոցիալ-տնտեսական ու մշակութային հարցերը, որոնք դրված էին կուսակցական և խորհրդային մարմինների առաջ:

Այլ խոսքով՝ նոր վարչական բաժանման շնորհիվ կարող էին բավականաչափ զարգանալ շրջանային մարմինները ու դրանց հետ անմիջականորեն կապված գյուղխորհուրդները: Լուծվում էր մեկ այլ խնդիր ևս. բանիմաց և փորձառու կադրերը, որոնք հիմնականում կենտրոնացած էին գավառում, կտեղափոխվեին որակյալ կադրերով անապահով շրջաններ:

Հանրապետության նոր շրջանացումը էական նշանակություն պիտի ունենար նաև սպառողական կոոպերացիաների զարգացումը խթանելու տեսակետից: Խոսքն այն մասին է, որ նախկին վարչական կառուցվածքը սպառողական կոոպերացիաների աշխատանքների համար ստեղծում էր անհարմարություններ. մի կողմից՝ ապրանքների փոխադրության տևողությունը երկարացնում և ընդհատումներ էր մտցնում ապրանքամատակարարման գործում, իսկ մյուս կողմից՝ առաջացնում էր կոոպերացիայի ֆինանսական դրության լարվածություն և ազդում էր կազմակերպչական ու կուլտուրական աշխատանքի սպասարկման որակի վրա:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի օրինակին հետևելով՝ ԽՍՀՄ Կենտգործկոմը ևս ընդունեց գավառները վերացնելու մասին որոշում[42]:

Հայաստանի Պետպլանը Ա. Գուլոյանի նախագահությամբ ստեղծեց հանձնաժողով՝ գավառների վերացման և նոր շրջանացման նախագիծ ստեղծելու նպատակով: Հանձնաժողովը, մշակելով Հայաստանի շրջանցման նոր բաժանման նախագիծը, անհրաժեշտ համարեց 1/3-ով կրճատել գոյություն ունեցող շրջանների թիվը՝ 31-ից հասցնելով մինչև 20-ի[43]:

Պետպլանի սահմանած նոր շրջանները, որ հաստատվեց Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովին (ԿՎՀ) կից միջվարչական հանձնաժողովի կողմից, պետք է հիմք ծառայեր Հայաստանի նոր շրջանացումը վերջնականապես հաստատելու համար:

Ըստ վերոգրյալ նախագծի՝ Սևանի գավառի 6 շրջանների խոշորացումով ստեղծվելու էր երեք շրջան: Ախտայի և Ալափարսի շրջանները (ընդամենը 62 բնակավայր, 50 հազ. բնակչություն)[44] միավորվելու էին մեկ շրջանի մեջ (կենտրոնը՝ Ախտա)[45]: Նոր Բայազետի շրջանը կազմված էր լինելու գոյություն ունեցող շրջանից և լուծարման են-

---

[42] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 27. IX. 1930:

[43] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19. VII. 1930:

[44] Այլ կարգի տվյալներ են պարունակում պաշտոնական մի ուրիշ փաստաթղթում՝ 45 բնակավայր, 42641 բնակիչ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 4, գ. 3, թ. 14):

[45] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19. VII. 1930, 20. VII. 1930:

թակա Մարտունու շրջանի մի մասից (ընդամենը 36 բնակավայր, 46 հազ. բնակչություն)[46]: Բասարգեչարի շրջանը, իր հիմնական տարածքից բացի, կազմում ունենալու էր Կարմիր գյուղի շրջանի գյուղերը, ևս երկուսը՝ Մարտունու շրջանից[47] (ընդամենը 51 բնակավայր, 48 հազ. բնակչություն)[48]:

1930 թ. հուլիսի 28-ին ՀՍԽՀ Պետպլանի կողմից հրավիրված հանրապետական խորհրդակցությունը, որին մասնակցում էին բոլոր շրջգործկոմների, գավկոմների, կոմիսարիատների, կոոպերատիվների և արհմիութենական կազմակերպությունների պատասխանատու ներկայացուցիչներ, լսեց ու քննարկեց շրջանացման հանձնաժողովի նախագահ Ա. Գուլոյանի զեկուցումը «Գավառների վերացման և ՀՍԽՀ նոր վարչական բաժանման» հարցի մասին: Նա նշեց, որ Հայաստանի պայմաններում հնարավոր չէ նոր բաժանման դեպքում դարձյալ պահպանել 31 շրջանների գոյությունը: Հանձնաժողովի կազմած նախագծով առաջարկվում էր ստեղծել 24 շրջան: Ներկայացնելով հանձնաժողովի մոտեցումները՝ Ա. Գուլոյանը բացատրում է, որ «Նախքան այս նախագիծը, որի մասին պիտի զեկուցեմ ձեզ, նախատեսել էինք Հայաստանում ունենալ 20 շրջան: Հետագա ուղղումներից հետո ավելի ճիշտ և նպատակահարմար համարեցինք միացված որոշ շրջաններն անջատել, որի հետևանքով ստացանք 24 շրջան: Վերականգնեցինք Սիսիանը, Մոլլա-Գյոկչան, Թալինը և Վեդին, որպես ինքնուրույն շրջաններ»[49]: Զեկուցողը նշում է, որ ընկերներից ոմանք դեմ են արտահայտվում Մարտունու շրջանի վերացմանը, գտնում են, որ հարկավոր է թողնել այն որպես ինքնուրույն շրջան և չծանրաբեռնել առանց այդ էլ դժվար ղեկավարվող Բասարգեչարի շրջանը[50]: Առաջ անցնելով նշենք, որ Մարտունիի շրջանը չվերացվեց:

Պետպլանի նախագահ Ա. Գուլոյանը վարչական այս բարեփոխումը կարևորում է նաև շրջանները որակյալ կադրերով համալրելու և նրանց տեղական բյուջեն լրացուցիչ դրամական հոսքերով ապահովելու հանգամանքով: Նա փաստեր է բերել նաև այդ մասին՝ նշելով, որ եթե մինչև այժմ գավառական ապարատում զբաղված էին 530 հոգի, որոնք ստանում էին 44.777 ռ., ապա այժմ կուսակցության որոշմամբ նրանց 90 %-ը մշտական աշխատանքի է ուղարկվում շրջաններ ու գյուղեր՝ իր հետ շրջան մտցնելով նաև բավականաչափ դրամական միջոցներ: Այնուհետև նա բացատրում է, որ նախատեսվում է գյուղական խորհուրդների 60 %-ին տալ ինքնուրույն բյուջե ունենալու իրավունք[51]: Խորհրդակցությունն ընդունեց 18 կետից բաղկացած որոշում: Նշենք թեմայի հետ առնչվող դրանցից 3-ը. ա) հավանություն տալ պետպլանի նախագծին, բ)

---

[46] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19. VII. 1930, 20. VII. 1930: Այլ աղբյուրում՝ 31 բնակավայր, 51862 բնակիչ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 4, գ. 3, թ. 14):

[47] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 4, գ. 3, թթ. 14–16, □Խորհրդային Հայաստան□, 19. VII. 1930, 20. VII. 1930:

[48] Այլ աղբյուրում՝ 47 գյուղ, 37707 բնակիչ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 4, գ. 3, թ. 14):

[49] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 5. VIII. 1930, 7. VIII. 1930:

[50] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 5. VIII. 1930:

[51] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 21. IX. 1930:

գտնել աննպատակահարմար Մարտունու շրջանի պահպանումը որպես առանձին շրջան, գ) Կարմիր գյուղի շրջանի 4 գյուղերը և Չիբուխլուն ու Սեմյոնովկան[52] տալ Դիլիջանի շրջանին[53]:

Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ վերացնել Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության գավառները և սահմանել նոր բաժանում՝ վարչական տերիտորիալ միավորների երկաստիճան համակարգով՝ գյուղական խորհուրդ ու շրջան: Գավառների գործառույթները փոխանցվում էին շրջաններին: Շրջանն այն հանգույցն էր, որտեղ պետք է կենսագործվեին կուսակցության և խորհրդային իշխանության որոշումները:

Ըստ վերոգրյալ որոշման՝ գավառները վերացնելու ընթացքում, որպես կանոն, արգելվում էր գոյություն ունեցող շրջանների և գյուղական խորհուրդների կողմից ամբողջացված վարչատարածքային ստորին միավորների սահմաններն ընդարձակել կամ կրճատել[54]:

ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությանը կից կազմվեց հատուկ հանձնաժողով՝ Ամատունու գլխավորությամբ, գավառների վերացման աշխատանքները ղեկավարելու համար[55]:

1930 թ. սեպտեմբերի 9-ին, ելնելով ԽՍՀՄ Կենտգործկոմի 1930 թ. հուլիսի 23-ի ու Անդրկովկասյան Կենտգործկոմի 1930 թ. հուլիսի 28-ի որոշումներից և ի լրումն ՀՍԽՀ Կենտգործկոմի 1930 թ. օգոստոսի 5-ի որոշման, ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունն ընդունեց Հայաստանի գավառները վերացնելու և նոր շրջաններ կազմակերպելու հիմնական սկզբունքների մասին որոշում. ա) վերացնել հետևյալ շրջանները՝ Ղզլլրոյի, Համամլուի, Կարմիր գյուղի, Հաջի-Խալիլի, Ալափարսի և Հրազդանի, բ) անհրաժեշտ համարել կազմակերպել Դիլիջանի նոր շրջան:

ՀՍԽՀ Կենտգործկոմի 1930 թ. սեպտեմբերի 9-ի որոշմամբ, ըստ բնակչության թվաքանակի, շրջանների համար սահմանվեց երեք աստիճանակարգ: Առաջին աստիճանակարգի մեջ դասվում էին մինչև 20 հազար բնակչություն և շրջգործկոմի 29 աշխատող ունեցող շրջանները: Երկրորդի մեջ՝ 20 հազարից մինչև 40 հազար բնակչություն և շրջգործկոմի 38 աշխատող ունեցող շրջանները, իսկ երրորդ աստիճանակարգի պահանջները բավարարելու համար շրջանը պետք է ունենար 40 հազարից ավելի բնակչություն և շրջգործկոմի 38 աշխատակիցներ[56]:

---

[52] *Բանն այն էր, որ նոր շրջանացման նախագծով Չիբուխլուն և Սեմյոնովկան կցվել էին Ներքին Ախտայի շրջանին, որով այդ գյուղերը տվյալ վայրից հեռու էին 33–35 կմ, իսկ Դիլիջանից՝ 18 կմ: Կային այլ անհարմարություններ ևս. դրանց վարելահողերը պատկանում էին Սևանի գավառին, արոտավայրերը՝ Լոռի-Փամբակին, գյուղխորհուրդները՝ Սևանին, իսկ սպառկոոպը՝ Դիլիջանին (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 7. VIII. 1930):*

[53] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 5. VIII. 1930:*

[54] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1930, 7. VIII. 1930:*

[55] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1930:*

[56] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16. IX. 1930, 21. IX. 1930:*

Հայաստանում ստեղծվեց 25 շրջան, որոնք ուղղակի ենթարկվում էին հանրապետության ղեկավար կենտրոնին[57]:

Սևանի գավառը բաժանվեց 4 ինքնուրույն շրջանի՝ Ախտայի – տարածքը՝ 1228 քառ. կմ (կենտրոնը՝ Ներքին Ախտա), Բասարգեչարի – տարածքը՝ 1201 քառ. կմ (կենտրոնը՝ Բասարգեչար), Նոր Բայազետի – տարածքը՝ 620 քառ. կմ (կենտրոնը՝ Նոր Բայազետ) և Մարտունիի – տարածքը՝ 1120 քառ. կմ (կենտրոնը՝ Մարտունի)[58]:

Ախտայի շրջանը կազմավորվել է նախկին Ռնդամալի շրջանից (բացի Դիլիջանի շրջանին անցած Չիբուխլու և Սեմյոնովկա գյուղերից) և Ալափարսի շրջանի մեծ մասից:

Բասարգեչարի շրջանը հիմնվել է իր նախկին տարածքի վրա:

Մարտունու շրջանը ստեղծվել է իր նախկին տարածքի վրա:

Նոր Բայազետի շրջանը կազմավորվել է իր նախկին տարածքի վրա:

- 1, 2, 3, 4 աղյուսակների տեսքով ներկայացնում ենք վիճակագրական տվյալներ վերոգրյալ շրջանների վերաբերյալ՝ ըստ նոր շրջանային բաժանումների[59]:

---

[57] Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, Երևան, 1930, էջ 365–366, «Խորհրդային Հայաստան», 21. IX. 1930:

[58] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 208, թթ. 10–13, 38, 42, «Խորհրդային Հայաստան», 27. IX. 1930, Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը, էջ 51, 56, 65, 79:

[59] Տե՛ս ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ, Երևան, 1936, էջ 14–15, 25–26, 48, 53:

Աղյուսակ 1

Ախտայի շրջան[60] Տարածությունը՝ 1228 թ. կմ² Խտաբնակվածությունը՝ 1 թ. կմ² 41, 1 շունչ

Բնակչությունը՝ 50464

Ըստ կարգի	Բնակավայրերի անունները		Բարձրությ. Սն. ծ. մ.(մն)	Աշխարհագրական տեղադրությունը						Բնակչությունն ըստ 1931թ. մարդահամարի								
										ընդամենը		այդ թվում						
	ներկա	նախկին		երկարությունը			լայնությունը			ծուխ	շունչ	արական	իգական	հայեր	թուրքեր	ռուս, ուկրաին, եզիդի	քրդեր	այլք
1	2		3	4			5			6	7	8	9	10	11	12	13	14
1	Աթաբեկյան	Թարվանսարա	1725	62	25	54	40	31	52	481	2674	1353	1321	2674	-	-	-	-
2	Աչափարա	Աչափարա	1560	62	17	55	40	25	22	430	2646	1345	1301	2646	-	-	-	-
3	Գեղաշվկա	Ակբասնդրովկա	1945	62	38	30	40	30	38	92	516	268	248	211	-	288	-	17
4	Հրազդան	Ախտա Ն.	1780	62	25	40	40	29	40	757	4067	2059	2008	3737	-	330	-	-
5	Լենինիստ	Ախտա Վ.	1900	62	28	20	40	28	20	483	2818	1429	1389	2818	-	-	-	-
6	Աղվերան	Աղվերան	1920	62	10	40	40	30	57	72	324	172	152	195	129	-	-	-
7	Աղջրաբակ	Աղվիարա	1780	62	24	00	40	30	35	209	1270	670	600	1270	-	-	-	-
8	Արզական	Արզաքանդ	1530	62	15	55	40	27	07	270	1424	739	685	1422	-	2	-	-
9	Աղավնաձոր	Բաբաքիշի	1750	62	21	35	40	35	10	178	1017	514	503	1015	-	-	-	2
10	Թեկի	Թեկի	1500	62	18	50	40	27	45	380	2074	1043	1031	2010	64	-	-	-
11	Կարենիս	Գուլուշ	1485	62	16	08	40	23	28	65	330	172	158	330	-	-	-	-
12	Գոմաձոր	Գոմաձոր	1970	62	37	50	40	33	35	93	543	280	263	543	-	-	-	-
13	Լգեան	Դաղակշաղ	1840	62	15	20	40	36	50	71	305	168	137	-	305	-	-	-
14	Դզմաշեն	Դզմաշեն	1770	62	32	20	40	34	20	450	2464	1250	1214	2464	-	-	-	-
15	Մեղրաձոր	Թաշարուխ	1770	62	18	55	40	36	44	354	2371	1254	1117	2370	-	1	-	-
16	Արտավազ	Թաքալու	1880	62	14	00	40	37	10	110	469	230	239	50	416	-	-	3
17	Լգեան	Թեղիարաբ	2000	62	22	50	40	22	27	133	762	386	376	762	-	-	-	-
18	Ծաղկաձոր	Դարաչիչաղ	1850	62	23	23	40	32	09	165	758	375	383	516	-	237	-	5
19	Ծաղկունք	Ծաղկունք	1855	62	32	30	40	34	50	308	1804	895	909	1804	-	-	-	-
20	Լգեան	Կարախլու	2005	62	14	35	40	35	10	31	128	68	60	-	128	-	-	-
21	Լգեան	Կարակալա	1880	62	27	55	40	16	32	48	193	101	92	-	193	-	-	-
22	Լգեան	Կարմիր Հուիսա	1925	62	11	30	40	37	57	23	43	18	25	43	-	-	-	-
23	Զորակ	Կորչրլու	1815	62	16	20	40	36	05	64	273	149	124	77	195	-	1	-
24	Մաբանբիկ	Փաշաբենդ	1750	62	20	07	40	34	55	110	559	284	275	433	126	-	-	-
25	Մաքրավան	Մաքրավան	1770	62	23	57	40	31	35	152	785	414	371	785	-	-	-	-
26	Հանքավան	Միսխանա	1980	62	08	50	40	38	10	117	411	236	175	25	1	-	-	385
27	Ջուլբեր	Ցաչի	1750	62	27	00	40	34	15	245	1430	724	706	1430	-	-	-	-
28	Գեղամավան	Շահրիզ	1855	62	33	10	40	33	50	338	1967	962	1005	1967	-	-	-	-
29	Լգեան	Ոզանլար	1475	62	15	10	40	24	28	29	142	75	67	142	-	-	-	-
30	Լճաշեն	Որդակլու	1930	62	35	50	40	30	55	536	3086	1540	1546	3086	-	-	-	-
31	Լգեան	Ուլաշիկ	1940	62	12	10	40	38	25	76	302	172	130	-	302	-	-	-
32	Վարսեր	Զրոզր	1925	62	34	20	40	33	20	250	1448	751	697	1448	-	-	-	-
33	Ջրառատ	Ռեզամալ	1715	62	25	25	40	32	55	698	3226	1622	1604	3225	-	1	-	-
34	Սևան՝	Եչեանվկա	1940	62	36	10	40	00	33	334	1353	712	641	578	-	763	-	12
35	Սոլակ	Սոլակ	1650	62	22	10	40	28	00	427	2207	1148	1059	2197	-	-	10	-
36	Լգեան	Սովարուլար	2050	62	17	20	40	34	52	60	306	151	155	-	-	-	306	-
37	Ցամաքաբերդ	Ցամաքաբերդ	1930	62	39	00	40	33	35	56	336	179	157	330	-	-	6	-
38	Քաղսի Ն.	Քաղսի Ն.	1675	62	23	55	40	28	55									
39	Քաղսի Վ.	Քաղսի Վ.	1750	62	24	25	40	28	25	397	2190	1131	1059	2190	-	-	-	-
40	Ֆանտան	Սուխոյ Ֆանտան	1815	62	20	50	40	33	40	138	575	280	295	424	-	149	-	2
41	Կաքավաձոր	Ֆաատու	1825	62	24	54	40	35	28	155	868	441	427	868	-	-	-	-
				գումար						9385	50464	25777 51.2%	24694 48.8%	46086 91.3%	1859 3.7%	1771 3.5%	323 0.7%	426 0.82%

[60] *Տե՛ս ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ, էջ 14–15,* http://gegharkunik.gov.am/, http://kotayk.gov.am

Աղյուսակ 2

Բասարգեչարի շրջան[61]

Տարածությունը՝ 1201 ք. կմ Խտաբնակվածությունը՝ 1ք. կմ 25, 2 շունչ
Բնակչությունը՝ 30351

Ըստ կարգի	Բնակավայրերի անունները: ներկա	Բնակավայրերի անունները: նախկին	Բարձրութ. ծն ծ. մ.(մտ)	Աշխարհագրական տեղադրությունը: երկարություն			Աշխարհագրական տեղադրությունը: լայնությունը			Բնակչությունն ըստ 1931 թ. մարդահամարի: ընդամենը: ծուխ	ընդամենը: շունչ	այդ թվում: արական	իգական	հայեր	թուրքեր	ռուս, ուկրաին-ներ	քրդեր	այլ
1	2	3	4	5			6			7	8	9	10	11	12	13	14	15
1	Ազատ	Աղքիլիսա	2075	63	32	05	40	10	51	80	307	164	143	-	307	-	-	-
2	Նորաբակ	Ակբզլու	2100	63	31	25	40	09	24	108	488	258	230	-	488	-	-	-
3	Ակունք	Կոխբուլաղ	1985	63	23	30	40	09	32	242	1376	696	680	1376	-	-	-	-
4	Ծափաթաղ	Բաշաքենդ	1950	63	08	25	40	24	47	79	373	198	175	-	373	-	-	-
5	Վարդենիս	Բասարգեչար	1940	63	23	30	40	11	15	763	3943	2072	1873	3914	19	10	-	-
6	Կարճաղբյուր	Գյոզալբուլաղ	1965	63	14	40	40	10	00	355	1874	942	932	1874	-	-	-	-
7	Ավազան	Գյոլլու	2080	63	22	15	40	18	20	79	291	149	142	-	215	-	76	-
8	Արեգունի	Գյունեյ	2000	63	16	25	40	20	25	70	411	248	163	-	411	-	-	-
9	Այրք	Դաշքենդ	2150	63	27	23	40	07	26	259	1230	660	570	-	1230	-	-	-
10	Ծովակ	Զաղալու Ն.	1940	63	17	20	40	11	12	230	1291	642	649	1291	-	-	-	-
11	Ախպրաձոր	Զաղալու Վ.	2165	63	18	25	40	06	02	132	603	315	288	397	206	-	-	-
12	Կութ	Զարբենդ	2125	63	33	45	40	11	00	179	808	423	385	-	808	-	-	-
13	Սոթք	Զոդ	2000	63	31	40	40	12	05	306	1599	870	729	-	1599	-	-	-
14	Գոլուբոյան չաևի	Խորհ. տնտ.	2050	63	30	07	40	15	47	23	155	137	18	110	19	19	-	7
15	Լուսակունք	Թուսկյուլու	1955	63	21	10	40	10	30	95	524	262	262	523	-	1	-	-
16	Տրետուք	Խալդյաղ	2050	63	31	00	40	14	25	87	383	208	175	-	383	-	-	-
17	Գեղամաբակ	Կայաբաշ	2030	63	28	15	40	10	00	81	356	192	164	-	181	-	175	-
18	Տորֆավան	Կանլի	1940	63	21	10	40	11	40	62	287	154	133	-	287	-	-	-
19	Կախակն	Կարախաչան	2090	63	26	40	40	17	10	151	652	346	306	-	652	-	-	-
20	Լծվան	Կարակոյուն	2175	63	30	15	40	09	10	46	209	121	88	-	209	-	-	-
21	Մաքենիս	Կզըլվանք	2165	63	16	50	40	07	37	157	703	356	347	421	282	-	-	-
22	Շատջրեք	Կոշաբուլաղ	2030	63	27	20	40	10	10	111	478	252	226	-	383	-	95	-
23	Մեծ Մասրիկ	Մազրա Մ.	1960	63	25	45	40	13	00	444	2066	1065	1001	1199	867	-	-	-
24	Փոքր Մասրիկ	Մազրա Փ.	1950	63	23	8	40	15	40	208	912	481	431	-	912	-	-	-
25	Լճավան	Ցարփուզլու	2040	63	16	35	40	09	06	178	831	453	378	284	547	-	-	-
26	Շատվան	Նարխանլու	2000	63	29	10	40	11	65	165	719	396	323	-	719	-	-	-
27	Նորակերտ	Նորակերտ	2030	63	21	00	40	16	30	136	610	301	309	610	-	-	-	-
28	Գեղամասար	Շիշկայա	2060	63	20	40	40	18	30	185	863	441	422	-	863	-	-	-
29	Ներքին Շորժա	Շորժա Ն.	2280	63	30	25	40	06	47	131	617	339	278	-	617	-	-	-
30	Վերին Շորժա	Շորժա Վ.	2285	63	30	05	40	05	20	65	295	164	131	-	295	-	-	-
31	Խաչաղբյուր	Չախըրլու	1965	63	21	30	40	10	07	348	1638	880	758	663	975	-	-	-
32	Կուտական	Ջանահմեդ	2080	63	30	05	40	16	23	81	383	213	170	-	383	-	-	-
33	Ջիլ	Ջիլ	2035	63	07	00	40	27	17	205	1041	572	469	-	1041	-	-	-
34	Ջաղացաձոր	Սարիյաղուբ	2110	63	28	55	40	10	02	107	471	265	206	-	471	-	-	-
35	Գեղաքար	Սուբաթան	2175	63	20	50	40	08	58	56	259	155	104	-	259	-	-	-
36	Փամբակ	Փամբակ	2015	63	11	40	40	23	05	102	512	266	246	-	512	-	-	-
37	Արփունք	Քյասաման	2025	63	23	50	40	17	25	138	569	302	267	-	569	-	-	-
38	Վանևան	Քյարքիբաշ	1960	63	20	20	40	11	40	39	224	127	97	-	224	-	-	-
							գումար			6283	30351	16085 52.7%	14266 47.3%	12662 41.7%	17306 57.2%	30 0.1%	346 1.2%	7 -

61 *Տե՛ս ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ, էջ 25–26,* http://gegharkunik.gov.am

Աղյուսակ 3

Մարտունիի շրջան[62] Տարածությունը՝ 1120 թ.կմ Խտաբնակվածությունը՝ 1թ.կմ 37, 4 շունչ
Բնակչությունը՝ 41872

	Բնակավայրերի անունները		Բարձրությ. Սև ծ. մ.(մոտ)	Աշխարհագրական տեղադրությունը						Բնակչությունն ըստ 1931 թ. մարդահամարի								
										ընդամենը		այդ թվում						
Ըստ կարգի	ներկա	նախկին		երկարություն			լայնությունը			ծուխ	շունչ	արական	իգական	հայեր	թուրքեր	ռուս, ուկրաիներեն	քրդեր	այլք
1	2	3	4	5			6			7	8	9	10	11	12	13	14	15
1	Ներքին Գետաշեն	Աղյաման Ն.	1970	62	55	50	40	08	35	372	2369	1178	1191	2369	-	-	-	-
2	Վերին Գետաշեն	Աղյաման Վ.	2025	62	55	05	40	07	50	364	2123	1077	1046	2123	-	-	-	-
3	Վարդաձոր	Աթամիան	2000	62	51	25	40	11	25	257	1492	755	737	1492	-	-	-	-
4	Լքված	Աթթաշ	2280	62	50	50	40	01	50	70	381	190	191	381	-	-	-	-
5	Արծվանիստ	Ալուչալու Ն.	1965	63	10	20	40	09	00	308	1726	876	850	1726	-	-	-	-
6	Լքված	Ալուչալու Վ.	2165	63	11	50	40	06	15	125	716	357	359	511	205	-	-	-
7	Աստղաձոր	Ալիկոջա	2025	63	01	05	40	07	08	349	2238	1144	1094	2238	-	-	-	-
8	Վարդենիկ	Գրոզալդարա Ն.	2000	63	06	15	40	08	06	847	5209	2668	2541	5209	-	-	-	-
9	Լքված	Գրոզալդարա Վ.	2240	63	08	00	40	06	00	108	653	343	310	653	-	-	-	-
10	Ջուլաքար	Ջուլախաչ	1990	62	02	25	40	07	35	618	3609	1808	1801	3609	-	-	-	-
11	Ծովասար	Թազագյուղ	2100	62	51	25	40	08	30	299	1539	758	781	1539	-	-	-	-
12	Լիմք	Գոլ	1950	62	53	50	40	09	38	378	2449	1274	1175	2449	-	-	-	-
13	Ծակքար	Դալիկդաշ	1975	62	52	48	40	10	10	210	1271	654	617	1271	-	-	-	-
14	Ծովինար	Թոլակդան	1940	63	08	00	40	09	40	353	2140	1116	1024	2140	-	-	-	-
15	Գեղհովիտ	Կարանլուղ Վ.	2050	62	56	55	40	06	05	418	2556	1260	1296	2556	-	-	-	-
16	Լքված	Կարմիրխաչաք	2185	63	08	35	40	03	50	46	315	148	167	315	-	-	-	-
17	Սառնաղբյուր	Կոշլխաչաք	2280	62	48	35	40	03	50	96	537	275	262	537	-	-	-	-
18	Ձորագյուղ	Վալի-Աղալու	2025	62	49	55	40	10	25	427	2623	1320	1303	2623	-	-	-	-
19	Մաղինա	Մաղինա	2220	62	54	50	40	04	40	72	463	227	236	402	61	-	-	-
20	Մարտունի	Կաբանլուղ Ն.	1950	62	58	15	40	08	30	461	2693	1414	1279	2691	-	-	-	2
21	Լքված	Ցանդ խորհ. տնտ.	2300	62	54	42	40	00	20	106	218	135	83	186	-	30	-	2
22	Երանոս	Ցերանոս	2000	62	51	00	40	12	25	436	3077	1600	1477	3077	-	-	-	-
23	Վաղաշեն	Ավդալարայու	1965	62	59	30	40	08	16	195	1297	658	639	1292	-	-	5	-
24	Լքված	Քարվանսարա	2300	62	54	40	40	02	24	38	178	94	84	69	80	-	29	-
25	Լեռնակերտ	Քասիկքաշ	2135	62	55	20	40	04	30	հաշված է Մաղինայի հետ								
							գումար			6953	41872	21329 50.9%	20543 49.1%	41458 99.2%	346 0.8%	30	34	4 -

[62] *Տե՛ս ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ, էջ 48,* http://gegharkunik.gov.am

Աղյուսակ 4

Նոր Բայազետի շրջան[62] Տարածությունը՝ 620 ք. կմ Խտաբնակվածությունը՝ 1 ք. կմ 54, 4 շունչ

Նոր Բայազետի շրջան[63] Բնակչությունը՝ 33757

	Բնակավայրերի անունները		Բարձրությ. Մեծ. մ.(մն)	Աշխարհագրական տեղադրությունը						Բնակչությունն ըստ 1931 թ. մարդահամարի								
										ընդամենը		այդ թվում						
Ըստ կարգի	ներկա	նախկին		երկարություն			լայնությունը			ծուխ	շունչ	արական	իգական	հայեր	թուրքեր	ռուս, ուկրաի-նացի	քրդեր	այլք
1	2	3	4	5			6			7	8	9	10	11	12	13	14	15
1	Լճափ	Աղջիքիր	1940	62	44	20	40	27	25	142	660	388	272	365	295	-	-	-
2	Բերդկունք	Աղկալա	1940	62	46	20	40	26	40	82	368	205	163	111	202	-	55	-
3	Այրիվան	Այրիվան	1950	62	45	55	40	26	20	92	456	237	219	439	17	-	-	-
4	Գեղարքու-նիք	Բաշքեանդ	2080	62	48	50	40	15	25	242	1350	713	637	1156	194	-	-	-
5	Գանձակ	Բատիկյան	1985	62	46	50	40	19	37	368	2270	1196	1074	2270	-	-	-	-
6	Արծվաքար	Կշլաղ	1945	62	49	40	40	21	05	313	1643	844	799	1642	-	1	-	-
7	Կարմիր	Կուլալի	1985	62	48	30	40	19	37	382	2851	1505	1346	2851	-	-	-	-
8	Ծովազարդ	Մուխան	1950	62	43	10	40	28	35	251	1259	630	629	1064	195	-	-	-
9	Նորաշեն	Նորաշեն	1935	62	41	15	40	30	20	67	361	169	192	339	10	-	12	-
10	Նորատուս	Նորատուս	1940	62	50	30	40	22	40	624	3057	1548	1509	3053	-	4	-	-
11	Գավառ	Նոր Բայազետ	1960	62	47	20	40	21	25	1623	8664	4367	4297	8568	69	20	-	7
12	Սարուխան	Դալիկարդաշ	2000	62	47	45	40	17	30	778	4294	2149	2145	4290	-	4	-	-
13	Հացառատ	Փաշաքեանդ	1975	62	46	40	40	20	25	664	3727	1906	1821	3724	-	3	-	-
14	Ծաղկաշեն	Թյարիմքենդ	2140	62	43	15	40	18	25	164	942	463	479	942	-	-	-	-
15	Լանջաղբ-ուր	Թյուզաջրդ	2015	62	48	20	40	16	20	321	1855	926	929	1855	-	-	-	-
							գումար			6113	33757	17246 51.2%	16511 48.8%	32669 96.8%	982 2.9%	32 0.1%	67 0.2%	7 -

Աղյուսակների վիճակագրական տվյալներից հետևում է, որ Մարտունու և Նոր Բայազետի շրջանները դասվել են երկրորդ աստիճանակարգի, իսկ Ախտայինը և Բասարգեչարինը՝ երրորդ աստիճանակարգի շրջանների ցանկում:

Նկատենք, որ վարչական բարեփոխումների հետ կապված՝ առաջացան բազում նոր խնդիրներ, որոնք պահանջում էին շուտափույթ լուծումներ:

Իրենց լուծմանն էին սպասում նաև նախորդ տարիներից կուտակված խնդիրները: Հաղորդակցության գծով կարևոր նշանակություն ուներ ճանապարհաշինության ծավալումը՝ նոր ճանապարհների շահագործումը, եղածների բարեկարգումը: Բավական է նշել, որ առաջին հնգամյակի տարիներին Հայաստանի ճանապարհային շինարարության վրա նախատեսվել էր ծախսել 32.540 հազ. ռուբլի, որից 1.800.000 ռ. տեղական նշանակություն ունեցող ճանապարհների վրա[64]: Նախատեսվում էր արագացնել Նոր Բայազետ–Բասարգեչար խճուղու կառուցումը, որը հնարավորություն կտար ավտոմոբիլային կանոնավոր հաղորդակցություն հաստատել Նոր Բայազետի վրայով Երևանի հետ: Այս ճանապարհի շինարարության հետ միաժամանակ ծրագրվում էր զարկ տալ նավագնացությանը Սևանա լճի վրա՝ որպես հաղորդակցության լավագույն ու ամենաէժան միջոցներից մեկի:

[63] *Տե՛ս ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ, էջ 53,* http://gegharkunik.gov.am.

[64] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29. VIII. 1930:*

Նախատեսվում էր կանոնավորել շրջանների ներսում միջգյուղական ճանապարհները ու դրանց հատկացնել հաղորդակցության այնպիսի փոխադրամիջոցներ, ինչպես կառքը, ավտոմոբիլը և այլն[65]:

Խնդիր էր դրվում Նոր Բայազետի վրայով հեռախոսային կապ հաստատել Բասարգեչարի և Երևանի միջև: Ընթացքում նոր հեռախոսակապուղիներ անցկացնել շրջկենտրոնների, նաև վերջիններիս ու գյուղական խոշոր բնակավայրերի միջև[66]:

1930 թ. վերջերից հանրապետության վերադաս մարմիններում ծավալվեցին աշխատանքներ՝ նշված խնդիրները գործնական հողի վրա դնելու ուղղությամբ:

Այսպիսով, ամբողջ շարադրանքից կարելի է հանգել երկու առանցքային հետևության. ա) վարչական բարեփոխումների իրականացմամբ խորհրդային իշխանությունները խնդիր ունեին դրանք ծառայեցնել պետության ամրապնդմանը, երկրի բարեկեցությանն ու համակողմանի զարգացմանը, բ) սոցիալիստական արտադրաեղանակի անկենսունակությունը միտումնավոր կապել նաև վարչատարածքային անհարմարությունների հետ:

УЕЗД НОВОГО БАЯЗЕТА В АДМИНИСТРАТИВНО - ТЕРРИТОРИАЛЬНОМ ДЕЛЕНИИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920–1930 гг.)

ГАМЛЕТ АРУТЮНЯН

Резюме

После советизации территория Армении несколько раз была подвергнута как общему, так и частичному административно - территориальному делению, в основе которого лежали экономические и политические мотивы. Особенности природно - климатических условий Армении в экономическом аспекте, разнообразие экономической деятельности, распределение рабочей силы и трудовых ресурсов, неудобства экономических связей внутри областей, послужили толчком для создания новых административно - территориальных единиц, что было обусловлено необходимостью централизовать управление страной. В так называемом административно-территориальном параде изменений вращался и уезд Нового Баязета.

[65] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 8. VIII. 1930:*

[66] *Տե՛ս նույն տեղում:*

NEW BAYAZET PROVINCE IN ADMINISTRATIVE – TERRITORIAL DIVISIONS OF SOVIET ARMENIA
(1920–1930)

HAMLET HARUTYUNYAN

Summary

After the Sovietization the Armenian territory was split into both general and partial administrative - territorial divisions for several times based upon economic and political incentives. Specific climatic conditions of Armenia in terms of economy, diversity of economic activity, distribution of workforce and labor resources, inconveniences in economic ties of internal regions stimulated new administrative divisions which were conditioned by the necessity of centralizing the country government. New Bayazet province was also in the parade of so-called administrative – territorial changes.